

Համարը N 01-Ն

Տիպը Պաշտոնական  
պարզաբանում

Սկզբնաղբյուրը ՀՀԳՏ 2013.04.15/12(456)

Ընդունող մարմինը Արդարադատության  
նախարար

Ստորագրող մարմինը Արդարադատության  
նախարար

Վավերացնող մարմինը

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 04.04.2013

Տեսակը Մայր

Կարգավիճակը Գործում է

Ընդունման վայրը Երևան

Ընդունման ամսաթիվը 04.04.2013

Ստորագրման ամսաթիվը 04.04.2013

Վավերացման ամսաթիվը

Ուժը կորցնելու ամսաթիվը

ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 4 ԱՊՐԻԼԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ N 01 ՊԱՇՏՈՆԱԿԱՆ  
ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄԸ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

4 ապրիլի 2013 թ.

N 01

## Պ Ա Շ Տ Ո Ն Ա Կ Ա Ն Պ Ա Ր Զ Ա Բ Ա Ն ՈՒ Մ

«Կուսակցությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 28.1 հոդվածի առաջին մասի համաձայն՝ այն կուսակցությունները, որոնց ակտիվների արժեքը գերազանցել է օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի տասնհազարապատիկը, պարտավոր են հաշվետվությունները հրապարակել միայն աուդիտի ենթարկվելուց հետո՝ աուդիտորական եզրակացության հետ:

Տվյալ դեպքում տարաբնույթ է ընկալվում վերոնշյալ իրավական ակտի հոդվածի դրույթը, որը վերաբերում է ակտիվների արժեքի որոշման պահին, այսինքն վերջինս որոշվում է հաշվետու տարվա դրությամբ, թե՛ հաշվետու տարվա ցանկացած պահի դրությամբ:

«Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 87-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ իրավական ակտի պաշտոնական պաշարբանումը տրվում է իրավական ակտի պաշտոնական մեկնաբանման համար նախատեսված կանոններով, իսկ նշված օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրավական ակտի մեկնաբանությամբ չպետք է փոփոխվի դրա իմաստը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ պաշտոնապես պարզաբանում ենք՝

«Կուսակցությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 28.1 հոդվածի առաջին մասի համաձայն՝ կուսակցությունները պարտավոր են ֆինանսական հաշվետվությունները հրապարակել միայն աուդիտորական եզրակացության հետ այն դեպքում, եթե նրանց ակտիվների արժեքը գերազանցել է օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի տասնհազարապատիկը հաշվետու տարվա ավարտի դրությամբ, այլ ոչ թե հաշվետու տարվա ցանկացած պահին՝ ակտիվների արժեքը օրենքով սահմանված չափը գերազանցելու դեպքում:

Հ. Թովմասյան